



ԲԱԶՄԱՎԷՊ

ՌՅԺԴ. 1864 — ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ. — ՆՈՅՆԵՐԵՐ

ԱՏՏԻԿԵԱՆ ՄԵՂՈՒ Ի ԶԻՆԵՂԷՆ ԼԵՐԻՆՍ ՀԱՅՈՑ

Նոյեմբ. Դեկտ. 401 ամ Ն. Ք.

Մէզն իբրեւ թաց վարագուրաւ մը ծածկէ աչքերնէս աշնան վերջին տեսարաններն այլ եղեամբ թափթըփած տերևոց վրայ՝ ձմեռուան սառամանեացկան խիկ մանրանկար մը ցուցընէ. գիւղերն դարձեալ յանապատ կու փոխուին. ըզբօսասէրք դառնան 'ի քաղաք 'ի պատըս պարեալ բնակարանս: Արդէն անասուն կենդանիք այլ իրենց ճարը տեսած են, որն չուերով ընդ օդ և ընդ ջուր 'ի հեռաւոր և տաքուկ տներ, սրն ամուր ապահով ծակ մը, փոս մը, խողոչ մը փրնտուերով և ներս քաշուերով. ծաղկատարի մեղուն այլ իր փեթակը փակեր մեղրով մոմով՝ ներանձնացեր իր վեցանկին սեւ նեկաց մէջ, զմայլի և թմրի իր հնարած անուշակ փիլիսոփայութեամբը, որ աւելի իրական է (գոնէ իրեն և ոմանց համար) քան Սոկրատայ քանի մը աշակերտացը, որք առաջին իմաստասէրք

կամ բանաւոր մեղուք անուանեցան, թէ զանազան գիտելեօք շարադրած գրոցն համար, և թէ քաղցրախօս ու հեշտալուր ոճով ու բառով գրելուն: Իրենց գեղեցկաբան կամ գեղեցկագիւտ աշակերտներն այլ ճարտարեցին ըսել իրենց ամենէն վայելչաբան և սիրելի փիլիսոփային համար (Պլատոնի), թէ 'ի տղայութեան իր լայն կռնակին վրայ բերանաբաց պառկած ատեն՝ մեղուաց պար մը մտաւ շրթանցը մէջ ու խորխա շինեց՝ 'ի նշան իր ճարտարասան քաղցրախօսիկ լեզուին: Անոր մէկ մեծ աշակերտակիցն և հայրենակիցն այլ՝ իր կակուղ գրչին և պաճուճազարդ բանիցն համար՝ Ատտիկեան մեղու աւանուանեցին. որ և ոչ միայն մեղուի փափուկ ափերուն մեղրն ունէր, այլ և ըստ տեղոյն անոր սուր խայթոյն այլ, զէնքեր. և զրեթէ հարիւրամեան կենաց

մէկ մասն 'ի բանակս և 'ի մրցանս ան-
ցուց, մէկալն 'ի զրուածս և 'ի խօսուածս
բանասիրականս, այն զարմանալի մո-
րեխածին Մեղուն, (կրիւլլոսի որդի ֆաւ-
նոփոն) . զոր այս օրերուս հայացու-
ցակն հրաւիրէ տեսնել մեր հայրենեաց
սառնամած լեռանց վրայ : Արդարեւ զար-
մանայիր Հայկակ, եթէ լսէիր թէ Ա-
թէնքի հիւսնեղեան մեղուն այս անյար-
մար և տարաժամ եղանակիս՝ եկեր կոր-
դուաց խորթ ու խրթին ժայռից և սա-
ռից վրայ բզզայ . այլ թերեւս ոչ պակաս
զարմանալի՝ ըլլայ՝ անոր մեղրը ճաշա-
կող փափկաբարոյ փիլիսոփայ մ' այլ
տեսնել այն անկոխ քարակոհակաց մէջ՝
այսպիսի ատեն :

Շատ անկարծ և կամ անբնական
տեղափոխութեանց և հեռագնացու-
թեանց գլխաւոր (թէ և դժնդակ) պատ-
ճառաց մէկն եղած է մարդկան իրարու
հակառակութիւնն, պատերազմք . որք
ինչպէս շատ հեղ անբաւ չարեաց՝ եր-
բեմն այլ բարեաց ինչ առիթք եղած
են . այսպիսի պատճառաւ մը ֆսենոփոն
այլ ընկաւ Հայոց ժայռուտ ու սառնուտ
լեռանց վրայ, յառաջ քան զայլ բազ-
մաթիւ մեծամեծ զօրավարս, որք գրե-
թէ ամեն դար՝ ամեն տասն—ամ անցան
ու դարձան մեր աշխարհին լեռներէն
ու հովիտներէն, ձիւներն անգամ հա-
լեցնելով իրենց նմանեաց արեամբ : Սա-
կայն ֆսենոփոն ոչ իբրեւ Անիբաղն
յԱլպեայս՝ կ'ենէր կ'ինջէր ընդ բազ-
մաժայռ կործայս, ռիսերիմ թշնամույ
հետ կռուելու և երկիրը աւրելու, և ոչ
լուկուլեայ և Պոմպէի նման՝ Տիգրանայ
և Միհրդատայ դէմ երթար վրէժխըն-
դրութեամբ . այլ ակամայ՝ կտրիճ բայց
դժբաղդ բանակի մը մէջ գտուած, բազ-
մազօր և նենգաւոր թշնամիէն հալա-
ծուելով՝ անփորձ և անկոխ ճամբէ ջա-
նար 'ի հայրենիս դառնալ և դարձնել
տասն հազարի չափ Յոյներ . և ասոր հա-
մար այս գործս ըսուեցաւ Նախնիք Բիշ-
րուն Յոշուաց, և անմահ յիշատակ բըռ-
նեց պատմութեան մէջ, նոյն իսկ ֆսե-
նոփոնի ճարտար առաջնորդութեամբն
և ճարտարադոյն գրչութեամբ զիպուա-

ծոցն, որ և իր զրուածոց գլխաւորնե-
րէն մէկն է . և այնչափ աւելի պատուա-
կան՝ որչափ որ կորսուած են ուրիշնե-
րուն զրուածքը նոյն գործոյ վրայօք . ո-
րոցմէ էր իր ընկերակից և զօրաց վա-
րիշներէն մէկն՝ Սոփենեսո Ստիւմփալա-
ցի . յորմէ կ'երեւի թէ Դիոգոր Սիկիլիա-
ցի առած է այս պատմութեան մէջ այն
զիպուածները կամ մանր տարբերու-
թիւնները՝ որք չեն յիշուիր 'ի ֆսենո-
փոնէ :

Իսկ մեղի գալով, Հայկակ, մեր ազ-
գին և աշխարհին, ֆսենոփոնի այս գը-
րուածք ինչպէս նաեւ կիշրումնարգ ը-
սուածն, յետ Յունաց՝ ամենէն աւելի
մեղի Հայոցս պիտուական և սիրելի է .
ոչ միայն զի մեր աշխարհին վրայ այլ
խօսի պատմութեանցը մէջ, այլ զի յետ
Յունաց՝ ֆսենոփոնի յիշած այնքան ազ-
գաց և ժողովրդոց մէջ՝ գրեթէ միայն
Հայք են՝ որք կարենան աւելի խորհըր-
դածել և քննել անոր ըսածները : Այս
դիտմամբ ես այլ այսօր քեզի հետ ոչ
ֆսենոփոնի վարքը՝ գործքերը և գրքերը
կ'ուզեմ քննել, և ոչ այն Բիւրուն նա-
հանջը չափել ծայրէ ծայր, այլ միայն
մեր աշխարհէն անցնելուն զիպուածք
և ճամբան : Բայց որովհետեւ առանց եր-
կու ծայրի մէջ չըլլար՝ հարկ կ'ըլլայ
գոնէ համառօտիւ յիշել և իրաց պատ-
ճառն, սկիզբն և վերջն այլ :

Պատերազմն 'ի բնէ պժգալի՝ այլ ա-
ւելի է երբ ընտանեկան կամ քաղաքա-
կան ըլլայ . այսպիսի էր նախապատ-
ճառ մեր այս զիպուածին այլ՝ երկու
Պարսիկ արքայորդի եղբարց մէջ ծա-
գած հակառակութեամբ . յայտ է քե-
զի, որ արքայազն եղբարց հակառակու-
թիւնն այլ շատ հեղ ժառանգութեան
իրաւանց կամ խնդրոց համար կ'ըլլայ :
Արտաշէս Բ . պայազատ Պարսից Աքե-
մենեայց իբրեւ անդրանիկ որդի Դարե-
հի Նոթոսի՝ յաջորդեց անոր յամի 404
նախ քան զթուական Փրկչին, իր հօր
թագաւորութենէն առաջ ծնած ըլլալով .
իսկ անոր թագաւորութեան ատեն
ծնաւ կիշրոս կրտսերն ուրիշ զշխոյէ :
Յոյսնի է կանանց նախանձն այլ ուր

բաղմունքներուն կայ, և ջանքն իրենց զաւակները վեր քշելու. մանաւանդ երբ Պարիսատիսի պէս գոռոզ դշխոյէ մը ծիրանածին ընծայուէր. Կիւրոսի պէս կտրիճ կորիւն մը, գրեթէ անտարակոյս էր ծագելի կռիւն: Սակայն Արտաշէս՝ Ուշեղ էր և կ'անուանէր (մենմոն 'ի Յու- նաց), միանգամայն և նախատես և մեծ- ոգի. ոչ զեղբայրն ուզեց զրկել և ոչ ինքն զինքը. այլ իբրեւ իրեն երեսփո- խան դրաւ զանիկա և վերատեսուչ ա- մենայն նախարարաց արեւմտեկողման իր ինքնակալութեան, և տօժոռն այլ գնել տուաւ 'ի Սարդիկէ մայրաքաղաք Լիւդիոյ, քիչ հեռու և յարեւելից Զմիռ- նիոյ. այսպէս մինչև 'ի ծայր արեւմտից հեռացընելով զնա՝ ամօրեայ ճամբա- ներով իր արեւելեան գահէն, իբրեւ 20 աստիճան աշխարհագրական երկարու- թեան իրարմէ հեռու: Կիւրոս իր եռան- դուն բնաւորութեամբն և Յունաց մեր- ձաւորութեամբ և ընտանութեամբ՝ ա- նանկ լաւ կարգաւորեց իր իշխանու- թիւնը և արքունիքը, որ նոյն իսկ Յու- նաց նախանձելի և պատուելի կ'ըլլար, եթէ չափազանցութեամբ և կողմնասի- րութեամբ չէ ասոնց պատմածն. բայց իր ամեն ցուցըցած և յուսացուցած գոր- ծերը սեցուց, փճացուց իր կենաց հետ՝ անսանձ փառասիրութիւնն, որով կ'ու- գէր միահեծան ինքնակալ ըլլալ, նաև զեղբայրը զրկելով: Գաղտուկ պատրաս- տութիւն տեսաւ. զօրք ժողովեց ցամա- քի և ծովու. օգնութիւն ուզեց 'ի Յու- նաց այլ, որոց վրայ մեծ համարմունք և վստահութիւն ունէր. Յոյնք, և մանա- ւանդ Սպարտացիք իրեն երախտապարտ էին, իրենց անկէ առած օգնութեանն համար. և առանց տնտնալու խաւրե- ցին անոր Կլէարքոս լակեդեմոնացին պզտի բայց ընտիր գնդով մը. որուն հետ միացան ուրիշ Յունաց մանր տէ- րութիւններէն այլ շատ զօրք իւրաքան- չիւր զօրավարօք, իբրեւ 16000 ոգիք. ո- րոց ընդհանուր զօրապետն եղաւ նոյն Սպարտացին. իսկ առանձին ազգաց մէջ Բէովտացւոց զօրավարն էր Պրոքսեն Թեբացին, որուն մտերիմ բարեկամն

էր մեր ատտիկեցի իմաստասէր մեղուն, որ և այս ատեն 50 կամ 55ամեայ մ'էր, արդէն երիտասարդութեան ատեն պա- տերազմի մէջ մտած ելած, հիմայ հա- սակին և ուսմանց ազդեցութեամբ ա- լելի խաղաղութիւն և մեղր սիրէր քան կռիւ և արիւն. անոր համար՝ ոչ իբրեւ մարտիկ և նիզակակից, այլ իբրեւ սրբ- տակից ընկերացաւ Պրոքսենի, միան- զամայն և իբրեւ բանասէր՝ նոր երկիր, ազգ և դէպք տեսնելու քննելու. մանա- ւանդ որ 'ի սկզբան ոչ ինքն և ոչ այլ զօ- րավարք գիտէին ուր և ինչ բանի հա- մար երթալին. զի Կիւրոս խաբելով կ'ըսէր թէ իրմէ ապստամբած Ասորոց դէմ կ'երթայ: Ասանկով ժողովեց զա- մենքն 'ի Տարսոն մայրաքաղաք Կիւլի- կիոյ, 'ի սկիզբն յունիսի (401 տարւոյն) մտաւ յԱսորիս, տարաւ բանակը մինչև յԵփրատ, անցուց անդին ('ի սկիզբն օգոստոսի) և պաշարաբեր նաւերը յետ դարձուց. ապա քիչ քիչ մեծերէն սկը- սեալ ինչուան վարիններուն իմացուց միտքը. զոր ոմանք յօժարութեամբ ո- մանք դժարութեամբ յանձն առին, յու- սալով իր խոստմանց և բաղդին այլ: Ա- պա ուշանալ չէր ըլլար. սակայն Միջա- գետաց չէն և անչէն ընդարձակութիւնը կտրելու համար այլ մինչ 'ի սահմանս Բաբելոնի՝ ամիս մը պէտք եղաւ: Այն մի- ջոցին Արտաշէս այլ իմանալով եղածը՝ պատրաստեցաւ արեւելեան զօրօք մեծ բազմութեամբ՝ եղբօրը դէմ ելնելու. նա աւելի շուտով հասաւ Եփրատայ և Տիգրիսի ամենէն իրարու մօտ եղած տեղերը, որ հին Բաբելոնի մօտերն է. և հոն Կուռնաքսա անուանեալ աւանի մը մօտ (որոյ դիրքն շատ յայտնի չէ) յեօթն սեպտեմբերի եղաւ հին պատմու- թեան մէջ անուանի և բաղդասահման պատերազմաց մէկն. որ մեր այս երե- կոյեան զրոյցներէն դուրս կու'մնայ. այլ այսչափ ըսելի է, որ երկու կողմէն այլ կըրօվ և կտրծութեամբ կռուեցան, ի- րաւունքն յաղթող եղաւ. Կիւրոս ոչ միայն անձամբ հասարակ զինուորի պէս կռուէր, այլ և եղբօրն հետ զարնուե- ցաւ ու վիրաւորեց զնա. բայց մեռնողն

ինքն եղաւ, ըստ ոմանց 'ի նոյն ինքն յԱրտաշիսէ զարնուած: Կենացն հետ վերջացաւ պատերազմն, և ցրուեցաւ արևմտեան բանակն:

Կիւրոսի ասիական գունդերն նուաճուեցան օրինաւոր իշխանութեան. իսկ Յոյնք՝ որոցմէ քիչ մարդ ինկեր էր պատերազմին մէջ, անկէ շատ աւելի դժար փորձանքի բռնուեցան: Արտաշէս իրենց պատգամ խաւրեց որ զէնքերնին թողուն՝ ու իրմէ ուրիշ փոխարէն առնելով ազատ մնան կամ երթան: Յոյնք պատասխանեցին, թէ քանի որ զէնք ունիմք՝ անոնք մեզի բանի կու գան, առանց զէնքի մեկը այլ կրնանք բանի չգալ, չեմք ուզեր մեր ստոյգ օգուտը Արտաշիսի անստոյգ վարձուց հետ փոխել. և եթէ ուզէ Արտաշէս փորձել զէնքերնուս արուեստը՝ պատրաստ եմք:— Հարկ եղաւ որ առանց կռուի զիջանի թագաւորն թողլու զանոնք երթալ իրենց երկիրը, միայն թէ անցած տեղերնուն վրէնսս չընեն:— Այս այլ չէր անվայել Արտաշիսի ուշեղութեանն. դժբաղդաբար շատ հեղ շատ ուշիմ թագաւորը և անթափ իշխանական գլուխք՝ ուշաթափ կ'ըլլան իրենց պաշտօնէից անարժան թելադրութեամբք. այսպէս այլ եղաւ Արտաշիսի. հաւանեցաւ իր սիրելի Տիսափեռն մեծ նախարարին խրատուն՝ դաւելու զՅոյնս. զոր և գործով կատարեց անխիղճ խրատտուն, հրաւիրելով զգլխաւոր զօրապետս Յունաց իրեն վրանը, իբրեւ 'ի խորհրդակցութիւն և զաշնակցութիւն. և զամենքն այլ տասնումէկ հոգի՝ սպաննել տուաւ, կլէարքոսէն սկսեալ մինչև 'ի Պրոքսեն բարեկամն Գսենոփոնի: Երկրորդական զօրավարքն գոյժը լսելով փութացան հեռանալու, և իրենց առաջնորդ ընտրեցին Գրիսոփ Սպարտային. իսկ վերջապահ բանակին՝ զմերս Գսենոփոն, որ հայրենակցաց սիրովն և մտերմին մահուան ցաւովն զրդուած՝ յանձն առաւ այս ծանր և վաճառաւոր պաշտօնը, և մեծ հնարագիտութեամբ և քաջասրբութեամբ կատարելով՝ յաջողութեամբ այլ պսակեց, և թողուց յետնոց զար-

մանալի պատերազմական արուեստի օրինակ մը, որ կրնայ նախօրինակ ըսուիլ յաղթուած բանակի մը ետ քաշուելուն, որով այս դարուս սկիզբն այլ այնքան անուանի եղաւ Մօրոյ զօրավարն Փռանկաց, մեծին Նաբոլէոնի հետ բաղդատուածն:

Նորընտիր զօրավարն խորհուրդ ըրին բոլոր գլխաւորներով՝ ինչ ճամբով յետ դառնալնուն վրայ, որովհետեւ երկու մեծ և դիւրին ճամբայ կար, որով արդէն եկած այլ էին. բայց թէ անշէն կողմեր ունէր այն ճամբան՝ ուր դժար էր պաշար գտնելն, և թէ Պարսից արքունի գունդերէն բռնուած պիտի ըլլար. ինչպէս որ արդէն այլ Տիսափեռնէս մեծ գնդով մը, և Միհրդատ անուամբ զօրապետ մ'այլ 5000 ընտիր զօրք ետեւնուն ընկած՝ հալածէին: Նոր, անփորձ և դժուարին ճամբայ մը հաշկ սեպեցին բանալ Յոյնք, բայց իրենց նըպատակին հասցընելու աւելի յարմար. և այս էր Տիգրիսի եզերքներէն մինչև 'ի Ճորոխի եզերքը, կամ Կորդուաց լեռներէն մինչև 'ի Խաղտիս՝ ճեղքել մեր Հայաստան աշխարհի լեռնակոհակ բարձրուանդակը՝ յարեւելեան հարաւոյ յարեւմուտ հիւսիսոյ, ձեան և սառամանեաց եղանակի ատեն, և ելնել Տրապիզոնի և ուրիշ Յունական գաղթականաց կողմերը: Այս յանդուգն և բռնադատեալ խորհրդով՝ շտապեցին Յոյնք Բաբելոնի և Ասորեստանի կողմերէն դէպ 'ի Միջագետաց վերնակողմը, Տիգրիս գետոյն եզերքը բռնած, անցնելով անոր օժանդակները (զկապրոս և զՄեծ Զաւ գետ՝ որ Հայոց Աղբազ գաւառին լեռներէն կ'իջնէ), և երկու մեծամեծ քաղաքներն՝ Լարիսս և Մեւսիս. զոր հնագէտք ճանչնան՝ Ռեւեն¹ Ս. Գրոյց և Նիմրուտ հիմակուան, մէկայն Նինուէ կամ Մոշուշ, որ և հին ատեն այս անունը կրէր Մուծղ կամ Մօսլ կոչմամբ: Ասոնցմէ վեր Զախուի և Գզիրայի (Ճէզիրէ իպն-էօմէր) գաւառները մտան, որք այն ատեններ և

¹ Դասան ըստ այլ թարգմանութեան:

քիչ մ'առաջ Հայոց և Ասորեստանեայց միջասահմանք սեպուէին. և հիմայ հոս հասնեցնուն, մինչ Տիսափեռն ետնէն կու հալածէր՝ զիմացնէն կամ քովերնէն երեցաւ արեւելեան Հայաստանի կուսակալ ըսուած Որունդ մը, որ ըստ մեզ Հրանտ կամ Երուանդ պիտի ըլլայ, թէ ոչ Արմուդ¹, որ ըստ կարգի Հայկազանց Խորենացւոյն՝ այն ժամանակուան Հայ թագաւորն կու հանդիպի: Յոյնք երբեմն զարնուելով երբեմն փախչելով՝ միշտ գետն 'ի վեր ելնելով՝ հասան Ճէզիրէի այն կողմերը՝ ուր գրեթէ գետն խորունկ դարձանելով մօտենար լեռանց և ճամբան կտրէր. հարկ էր կամ գետը անցնիլ և Միջագետաց դաշտերը մտնել, կամ լեռն 'ի վեր դիմել. և ահա այս և հոս էր Յունաց ըրած ընտրութիւնն. որոց հրաւէր կամ հրապոյր մ'այլ էին բարեբեր Հայաստանի համբարքն, ինչպէս ինքն Քսենոփոնն այլ վկայէ: Նոյեմբեր ամսոյն կէսն էր երբ սկսան Յոյնք ելնել Կորդուաց լեռները, որ հոն 'ի սկզբան՝ գետոյն երեսէն հազիւ իբրեւ 1500 ոտք բարձր են, այլ երթալով բարձրանան՝ ինչուան 40000 և աւելի այլ: Ոչ անմիջապէս ելած տեղերնին յայտնի է, ոչ ճիշդ բռնած ճամբու գծերնին և ոչ ինչո՞ւ կողմերնին, և ոչ այլ ուրիշ քալած և իջեւանած տեղիքն. այլ շատ կամ քիչ հաւանութեամբ, ըստ քննութեան գիտնոց՝ որք աշխատե՞ր են այս ճամբորդութիւնը հետաքննելու, և զեւ իբր անտարակոյս ցուցած չեն. որովհետեւ հին և նոր անունները միաբանել շատ դժար է. դարձեալ բաւական անուն նշանակած չեն հին ուղևորքն, և ոչ այլ ամեն անգամ՝ դացած կամ դադրած օրերնուն թիւը. թող ուրիշ պատճառներն այլ, զոր աւելորդ սեպեմ հոս մէջ բերել, կամ մանր հետաքննել Յունաց բռնած ճամբան. այլ առ այժմ հաւանագոյնը յիշելով թողում անոնց՝ որ մասնաւոր փոյթ մ'ունենան այս խնդրոյս: Իսկ այս առջի լեռնակաւոր եօթնօրեայ ճամբա-

նին հաւանօրէն ճէզիրէի և Սղերտայ միջոց Ֆրնրդ և Ֆրնտրդ ըսուած բերդաւանաց կողմերէն սկսելով դէպ 'ի Մոկաց երկիրը ձգուած է, յետոյ անկէց այլ դէպ 'ի Բաղիշու ճամբան. և բոլոր երկամեայ Հայաստանի մէջ ըրած ճամբաներնուն դժուարագոյն մասերէն մէկն է. թէ լեռնոտ երկրին բնութեան պատճառաւ, թէ լեռնաբնակաց բարույն:

Ի սկզբնէ կամ հազարամեայ դարերէ վեր՝ քիչ փոփոխութիւն ունեցող ազգերէն մէկն այլ Քուշոյն է. որոյ և անունն գրեթէ անփոփոխ ասկէ 2300 տարի առաջ այլ յիշուի 'ի Յունաց Քարտուք կամ Կորդուէական, ինչպէս մեր նախնիք այլ անուանեն Կորդուք կամ Կորդուացիք. ևս և Կորձայք. որք և ինչուան հիմայ բանասիրաց մեծ քննութեան նիւթ են, մանաւանդ այս ետրի տարիներս. այսինքն թէ իրենց և թէ լեզուներնուն ինչ ազգէ ծագած կամ որո՞ւ նման ըլլալն: Հիմակուան լեզուներնուն նայելով աւելի Պարսից մօտ են. բնական տեղերնուն նայելով՝ հին Քաղդէացւոց և Մարաց սեփական են, իսկ այս Յունաց և Հայոց և ուրիշ հիներու յիշած Կորդուքն՝ Հայոց և Քաղդէացւոց կամ Ասորեստանեայց միջասահման ազգ և ժողովուրդ մ'են, երբեմն մէկուն երբեմն մէկայլին նուաճուած, շատ հեղայլ ինքնազուլի և ահարկու մերձաւորաց: Այսպէս էին նաև Քսենոփոնի աւտեն, որ և յիշէ թէ քիչ առաջ Պարսից թագաւորն ուղելով նուաճել զանոնք՝ 120000 զօրաց բանակ մը խաւրեց, որք գրեթէ բոլոր ջարդուեցան, կէս մը 'ի լեռանց կէս մ'այլ 'ի բնակչացն 'ի Կորդուաց. մինչև ստիպուեցան Պարսք դաշնադրութեամբ զիջանիլ: Այսպիսեաց միջէն ճամբայ ընելու համար՝ կրնաս երևակայել թէ ինչ զգուշութիւն և քաջասրտութիւն պէտք էր Յունաց. որք զիջեանց մօտեցան լեռանց, և առտուն կանուխ կամաց և լռիկ սկսան ելնել, որ չիմանան լեռնցիք. և այնպէս այլ եղաւ. վասն զի արդէն ձմեռն տիրէր լեռանց, արածականք 'ի գոմ փակուած էին.

¹ Եթէ արդարեւ Արմուդ է անունն և ոչ Արմուդ:

դուրսը թափառող չկար. ամենքն քաշուած էին իրենց գեղերը, որ շինուած են լեռանց գոգոց ու խոռոչից մէջ, և կէս մը ծածկուած քարերու մէջ և գետնի տակ. բնականապէս այլ իրարմէ հեռու և ոչ բազմաշէն: Ի՛նչ զարմանք ընկաւ անոնց վրայ՝ որ յանկարծ իրիկուան դէմ տնեւնուն գլուխը տեսան հազարաւոր զինեալ երիտասարդներ, որ ոչ Պարսից նմանէին և ոչ Հայոց. առաջին զրդումն՝ մէկէն տեղերնին թողուլ և փախչիլ տուաւ. Յունաց ուղածն այլ այս էր. անաշխատ ներս մտան, ինչ ուտելիք որ գտան առին. բայց ուրիշ բանի չդպան որ չզրդուին բարբարոսն. մանաւանդ թէ ընտանութեամբ այլ կանչէին զանոնք և իմացընէին որ միայն կերակուր և ճամբայ կ'ուզեն: Կորդուացիք ոչ եկան և ոչ դէմ կեցան. ինչուան որ Յունաց բանակն սկսաւ լեռներէն վար դէպ'ի ուրիշ գեղեր իջնել. գիշերն այլ վրայ կու հասնէր. այն ատեն փախըտեալքն դարձան և սկսան Յունաց վերջապահից վրայ կարկտալ քար ու փքին. և ոչ քիչ հոգի սպանեցին ու վիւրաւորեցին: Այս երկուքն էին իրենց զլխաւոր և ահաւոր զէնքերն. քար ու նետ. առաջինը ոչ այնչափ հեռուէն պարսատիկով նետէին, որքան 'ի մօտանց մեծամեծ կտորներ և ժայռեր լեռանց վրայէն զլորտկելով՝ ջախջախէին հանդիպածը. երկրորդը ձգէին երեքկանգնեան մեծամեծ աղեղներով, որոց լարը քաշած ատեննին ձախ ոտուրնին առաջ կ'երկընցընէին, և երկու կանգուն երկայն նետերը կու թռցընէին անանկ ուժով՝ որ գրեթէ միշտ վահանն այլ զրահներն այլ կ'անցնէր, և զոնէ առանց վէրքի չէր թողուր դպածը. Յունաց համար այնչափ մեծ կու դար այս նետը՝ որնիզակի տեղ 'ի դործ ածէին. իսկ Կորդուացնիզակներն ինչուան 15 կանգուն (յունական) երկայն էին: Կրնաս չափել զանոնք հիմկու ֆրդաց նիզակներով, թէ որ ոչ անոնք գրեզ չափեն. Յոյնք առաջին անգամ ասոնց փորձն առած, ու նորէն գեղերու մէջ ապաստանած՝ շատ վախով և զգուշութեամբ ան-

ցուցին այն գիշերը. վասն զի Կորդուացիք լեռանց չորս կողմը կրակ վառած հսկէին, ահաւոր գեղեցկութիւն մը տալով արդէն բնութեամբ խոժողագեղ տեղեացն: Նոյն զգուշութեամբ և կասկածով ելան և ճամբանին շարունակեցին Յոյնք երկրորդ օրը, բռնած զերինին և անասուննին ալ ազատ թողլով որ իրենց արդեւ չըլլան և պաշարնին այլ շուտով չսպառեն. և այնպէս երբեմն կուտելով երբեմն անխռով անցուցին այն օրը: Երրորդ օրն բնութիւն և բնակիչք միաբան հակառակեցան. Յունաց բռախառն փոթորիկ մը փրթաւ վերէն, զոր աւելի դժնդակ ըրին Կորդուաց պարսերն ու նետերն. Յոյնք կ'ուզէին տեղ մը քաշուիլ պատասպարիլ. բայց եթէ զտնէին այլ պաշարնին հատած պիտի կորսուէին. հարկ էր որ բքոց և փքնաց մէջ յառաջն անծանօթ ճամբուն. որուն երկու կողմերն այլ բռնեցին տեղացիք երբ նեղ կրճերու հասան, և անհնարին տագնապ հասուցին Յունաց: Հոս ֆաննոփոն իր ամեն հնարք և համբերութիւնը հատուց, քաջալերելով և յորդորելով իրենները որ անխռով և յուշիկ առաջ երթան, և շատ անգամ կանգ առնեն կամ ետ քաշուին թշնամիները ցրուելու, և չարտորան այն անստոյգ և վտանգաւոր տեղուանքը: Այս պիտանի խրատը անանկ տագնապի առնէն դժար էր ամենուն հասկըցընել. և նոյն ինքն առաջնորդն ֆիրիստփ ձանձրանալով սասանկ կամկար շարժելէն՝ երագեց ընթացքը իրեն յառաջագնաց զնդովը. անանկ որ վերջապահ գունդն ստիպուեցաւ գրեթէ փախչելու կերպով փութալու անոր ետէն. և ահա այս խուճապման ատեն քաջ սպարտացին Կլէոնիմ նետահարեալ 'ի կողն, վահանն այլ կաշիէ զրահներն այլ ծակուելով՝ ընկաւ անկանդնելի: Անկէց ոչ հեռու ժայռերուն վրայ փռուեցաւ Բասիաս Արկադացին, փոխանակ իրեն զրախտանման Տեմպեան հովիտներուն. թերեւ զանոնք և իր ցանկալի ջերմիկ տնակը և ընտանիքը կ'երազէր՝ երբ սուր փքին մը զլխին մէկ կողմէն մէկայլն

անցնելով և ելնելով՝ միտք ու շունչն այլ մէկէն թռուց... հասնուց այլ հայրենի հողուց. — աւաղելի ստուգութիւնն այս է՝ որ երկու երիտասարդաց մարմինքն այլ հայրենեաց հողէն հեռու մը նացին ուր որ ընկան, և երկուքին հաւասար եղաւ օտար և խորտ գետինն, թէ խստաւար սպարտացւոյն և թէ փափկաւար Արկադացւոյն: — Բայց ֆանեոփոն շատ մեղադրեց ֆիրիսոփայ արտորալը. այն այլ պատճառ բերաւ ճամբուն նեղուածքը, ուր պէտք էր շուտով հասնիլ քանի որ թշնամիք բռնած չէին կիրճերը:

Այս օր ֆանեոփոն քանի մը հողի բռներ լեռնաբնակներէն և երկուքը պահեր էր. մէկուն հարցուցին թէ յարմար ճամբայ մը պիտէ անցնելու, պատասխան չտուաւ որչափ այլ չարչարեցին, մինչև սպանեցին միւսոյն զիմաց. նա այլ զարհուրած իմացուց որ խեղճ ընկերն այն կողմերը կարգած աղջիկ մ'ունէր, անոր համար չէր ուզեր զրուցել ճամբան. իսկ ինքն ապահովուց որ կայ լերանց մէջ աղէկ ճամբայ մը, բայց հոն հասնելու համար հարկ է մօտիկ լերան մը գլուխ բռնել շուտով՝ թշնամիներն չհասած, ապա թէ ոչ անկարելի կ'ըլլար անցըն: Երկու հազար կտրիճք՝ Արիստէոս ֆիոսացւոյ առաջնորդութեամբ յանձն առին նոյն իրիկուն ելնելու բռնելու լերան գլուխը, և փող զարնելով իմացընելու մէկալոնց որ երկրորդ օրը հոն գան. ֆանեոփոն այլ իր վերջապահ գնդովը ուրիշ ճամբայ մը բռնեց՝ որ թշնամիները խաբէ և չտեսնեն առջինները. և երբ եկաւ ձորեզրը՝ որոյ գիմացի կողմն էր լեռնանցքն, կորդուացիք սկսան վերէն մեծամեծ սայլի բեռան չափ քարեր գլորտելել, որոնք կտորտուելով ժայռից վրայ՝ չէին թողուր Յունաց առաջ անցնիլ. պէտք եղաւ որ յետ քաջուին և գիշերը հոն անցընեն. մինչ կորդուացիք մինչև առաւօտ այլ անդադար քարերը գլորելու հետ էին: Այն միջոցին յառաջագէժ գունդն անկասկած հասաւ թշնամեաց պահնակներուն վրայ, զմանս սպանեց, զմանս

փախուց, և բռնեց անոնց տեղը, ու զի շերը հոն կեցաւ, կարծելով թէ լերան գլուխը հասեր է. բայց դեռ բարձրագոյն բլուր մ'այլ կայր ելնելու: Առաւօտուն՝ մէզն օգնական առնելով յառաջ խաղացին Յոյք թշնամեաց կողմը, և միգին փարատած առեն վրանին հասնելով՝ փողելով կանչելով ու զէնքերով հալածեցին. փողոց հնչումը լսելով՝ ֆիրիսոփ յառաջապահ գնդովն ելաւ երթալու նոյն ճամբէն. իսկ ֆանեոփոն վերջապահ գունդն երկու բաժնեց, մէկուն յանձնելով պաշարները և կարասիքը՝ քովընտի ճամբէ մը գալու. ասանկ հասան բլրի մը, ուսկից հալածեցին թշնամիները. և տեսան ուրիշ բարձրագոյն բլուր մ'այլ զոր թշնամիք բռնեցին. ֆանեոփոն առջինին վրայ պահապաններ թողուց երկու սպայից ձեռաց տակ՝ որ պաշարաբեր գունդը պաշտպանեն, և ինքն կէս գնդովն յարձակեցաւ երկրորդ բլուրն այլ բռնեց. բայց անոր վերև ուրիշ և աւելի դժուարաւ կոխ մ'այլ բարձրացած էր, և էր այն՝ ուսկից գիշերագնաց Յոյք կորդուաց պահնակները սպաներ և վռնտեր էին: ֆանեոփոն երազոտն կտրիճներով այս երրորդ բլրին այլ տիրեց. վասն զի բարբարոսը առանց իսկ նետելու և պարսելու ետ քաջուեցան. այս յաջողութիւնս ձախողութեան մը նշան էր. և յիրաւի հապիւ երրորդ բլրին վրայէն ֆանեոփոն իրեններուն պատուէր կու տայր կամաց շարժելու, Արգիացի մը շնչակտուր վազելով հասաւ և գուժեց, որ առջի բլրին վրայ թողած երկու սպայքն (կեփիսոզոր և Ամիլիկրատ) մասամբ պահապան գնդին պաշարուած սպանուեցան՝ ի թշնամեաց, որք և փութալով հասան ֆանեոփոնի կեցած տեղոյն զիմաց ուրիշ բլրոյ մը վրայ գիղուեցան: Հոս Ատտիկեցի մեղուն իմացաւ որ խայթոցի տեղ մեղրը բանեցընելու է. մարդ զրկեց հաշտութեամբ խօսելու անոնց հետ, և զինադուլ ընելու. և խնդրեց որ մեռածներն այլ թողուն վերցընելու: Կորդուացիք այլ պահանջեցին որ Յոյք իրենց գեղերը չայրեն: Այն միջոցին մէ-

կայլ գունդն այլ եկաւ հոն ժողովեցաւ, և միաբան սկսան շարժիլ. թշնամիք անխռով թողուցին զանոնք. բայց երբ տեսան որ բլուրներէն վար կ'իջնեն, նորէն քարերու ձեռք զարկին և Յունաց ետեէն հասուցին. այս տագնապին ատեն Քսենոփոնի վահանակիրն փախաւ քովէն, և մեր մեղուն ջախջախելու վրայ էր՝ երբ Եւրիլոք Լուսիացին հասաւ՝ վահանաւը պաշտպանեց ապրեցուց զնա. ինչպէս երբեմն իր մեծ մարտակիցի Սոկրատէս 'ի Դելիոնի պատերազմին: Վերջապէս հասան բլրոց ստորոտը, ուր միացան ամեն զնդերն այլ. և ըստ իրենց խոստման արձրկեցին կապած առաջնորդին, անոր տեղ իրենց մեռելոց մարմինները առնելով, և իրենց սովորութեամբ թաղեցին: Այն գիշեր կեցան գեղերու մէջ, ուր առատ համբար և կերակուր այլ վայելցին. մանաւանդ պատուական գինի, որ մեծամեծ գետնաթաղ բռած կարասներու մէջ լցուած էր:

Երկրորդ օրը նորէն իրենց կարգը բռնելով, Քիրիսոփ առաջապահ, Քսենոփոն վերջապահ, շատ հեղ կորդուաց հետ զարնուելով, լեռներէն ելնելով իջնելով, վերջապէս հասան անոնց ստորոտը, վերջին գեղերուն. որոնցմէ վար դիմացին քիչ հեռու երկայն արծաթ գօռոյ պէս տարածուած՝ տեսնուեցաւ Տիգրիսի օժանդակ գետ մը՝ զոր Կենդրիս կոչէ հեղինակն, և որոյ միւս կողմն երևէին սահմանք և լեռնադաշտակք Հայաստանի, որք և այն ժամուն՝ թերևս քան մեզի՝ աւելի ցանկալի էին Յունաց:

Այս աշխարհաբաժին գետս զոր գրեթէ ամենայն հետազննողք ճանչան հիմկու Պօնդաւը, որ է արևելեան առաջը Տիգրիս գետոյ, զոր և Շատախ կոչեն Հայք 'ի կողմանս Մոկաց, և նոյն երևի զոր Խորենացին յիշէ 'ի պատմութեան պատկերի Տիրամօրն. զոնէ նոյն Անձեացեաց հարաւակողման քարալեռանց բզիած աղբիւրներէն գետացեալ. իսկ անունն՝ եթէ հայկական է՝ կրնայ կարծուիլ Կորդիք կամ Կորդիքաց

գետ, զի այսպէս կոչուէր Կորճայից մէկ գաւառն. եթէ պարսկական է իբր Կենդի-րուստ՝ նշանակէ Ժակդ-ըռնր կամ գետ. և դարձեալ յիշել տայ Խորենացւոյն ըսածն, թէ «Չար ջուրքն հոսեալ 'ի լեռանց Կանգոռաւաց, որ է Ագուաւքար», երթան 'ի Տիգրիս: Արդ այս գետոյն դիմաց գիշեր մը դադրելով՝ առաւօտուն մօտեցան Յոյնք՝ անցք փորձելու. և շատ դժար գտան. վասն զի սաստիկ սրընթաց և մեծ կարկաջանօք թափելով կ'երթայր գետն խառնուելու ընդ (արևմտեանն) Տիգրիս անկէ քանի մը մղոն հեռու: Զրէն և խորէն աւելի այլ վախնալու երևցան Յունաց՝ ետեսնուն կորդուացիք, որ լեռներէն իջնալով կու գային վերջի նետերնին և պարսերնին այլ պարպելու. իսկ դիմացնէն՝ գետոյն այն կողմը բռնած էին նախայիշեալ Երուանդայ կամ Որոնդի, և մէկ Արդոկ անուն իշխանի մ'այլ (հաւանօրէն Արտակ Մոկաց նախարարի) հեծեալքն. և անոնց ետեէն այլ բարձրաւանդակաց վրայ՝ հետևակ զօրք, ճամբուն նեղուց անցքը պահելով: Իրեք կողմանէ վտանգ կար. և գոնէ մէկէն կամ երկուքէն փախչելու ճար չկար: Հոս Քսենոփոն իր հնարագիտութեամբն զուարթերես մէջ մտաւ, սկսաւ յաջող երազներ պատմել, զոհերն այլ յաջող ելան կ'ըսէր. ոմանք այլ լուր բերին որ գետոյն դիմացի կողմը աղկուկնք և ծերեր լաթ կու դնէին քարածերաներու մէջ, ըսել էր որ հոն գետն ծանծաղ և անցանելի էր: Դէպ յայն կողմը դիմեցին և իրարու սիրտ տալով հասան գետոյն եզերքը, նորէն զոհ մ'ըրին ջրին վրայ և յաջող գտան: Քիրիսոփ սօթթովուեցաւ ցատքեցներս իր առաջակարգ գնդովը, Քսենոփոն այլ վերջապահովը. բայց քիչ մը ուրիշ դիւր բռնելով, իբր թէ կ'ուզեն թշնամիները մէջ փակել երկու դիաց. և ամենքն միաձայն սկսան կանչել իրենց ազգային պէսաւս ըսուած երգը, զոր մեծ վտանգաց կամ հանգիսից մէջ կ'երգէին. որ և յիրաւի թէ զարմանք թէ շփոթութիւն ձգեց մեր Կորճայից և Մոկաց. և նախ հեծեալքն

ապա հետևաւորն յետ քաշուեցան : Բայց լեռնցիք մէկայլ կողմէն մօտեցան ֆահնտփոնի վերջապահաց, իրենք այլ իրենց կորդ լեզուովն երգելով. սակայն քանի մը հոգի միայն կրցան վիրաւորել, մինչ մէկալոնք անցան գետը. և սկսան շուտ շուտ առաջ երթալ, ինչուան 15 մղոն տեղ, որ անմարդի էր, պատճառաւ կորդուացոյ ստէպ արշաւանաց. ինչուան որ հասան իշխանանիստ մեծ աւան մը, որոյ տանց շատին վրայ աշտարակներ կային : Հնազէտք կարծեն թէ այս տեղս հիմկու Սղերտ քաղաքաւանն ըլլայ. շատ հաւանական է գոնէ անոր մօտ ըլլալն. և Յունաց բրոնաժ ճամբան կ'երևի թէ անկէց 'ի Բաղէշ տանողն է, լեռանց նեղուցներու մէջ, որ կէս 'ի բնէ կէս արուետով բացուած

են, ինչուան Ռահվայի քաղաքանօթ հո՛վիտը. որոյ ճամբուն վրայ ինչուան հիմայ կարաւանք կ'ապաւինին բազմաթիւ ամրաշէն խաներու մէջ. թէ և ասոնց շէնքն շատ հին չերևան, սակայն ճամբան հին ատենէ բացուած և վարուն էր. և այս է մեր նախնեաց յիշած պահակն և դրունք Ասորեստանեայց, որոյ գլուխն կամ մէջն՝ վանայ ծովուն հարաւային արևմտեան դին Պաղակ Հոյցսլ կ'ըսուէր, Աղձնեաց և Տուրուբերան նահանգաց ու Մոկաց միջոյ. Յունաց բրոնաժ ճամբան այլ զայս կարծեմ :

Հ. Ղ. Մ. ԱԼԻՇԱՆ

Կը շարունակուի :

ԲԱՐԻՉՈՒ ԲԷՐ-ԼԱՇԷԶ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆԸ

Բարիզու արեւելեան հիւսիսային ծայրերը կ'իյնայ Բէր-Լաշէզ ըսուած գերեզմանատունը, ուր չիք օտարական մը որ զանց առնէ պտըտելու, և Գաղղիոյ անցեալ յիշատակացն և փառաց ոսկերացը ողջոյն մը տալու : Բարիզու Օնէյ դրան զիմացը կ'իյնայ այս գերեզմանատունը, դուռն դէպ յարեւելս բացուած. միջին դարու ատեն՝ սոյն տեղս մշակեալ դաշտ մըն էր, և կ'ըսուէր Եպիսկոպոսի արտ (Champ de l'Évêque) : Ռէնոյ անունով Բարիզացի մը 1347^{ին}, զնեց այս երկիրս և փառաւոր ապարանք մը շինեց, այնպէս որ առակ դարձաւ այս շէնքին չափազանց զարդերն, և անուանեցին Խեկոռքիւն Ռեկոյի (La folie de Renault) : Լուգովիկոս ԺԴ^ն ժամանակ Յիսուսեանք ժառանգեցին այս տեղս, անունը Լեառն-Լուգովիկոսի դրին, և այն եղաւ իրենց Գաղղիոյ մէջ

կեդրոնական Մայր վանքը : Այն ժամանակուան (1705) մեծաւորնին որ Հայր (Բէր) Լաշէզ կ'ըսուէր, և թագաւորին խոստովանահայրն էր, մեծցուց ընդարձակեց. երբոր 1763^{ին} Յիսուսեանց կրօնը վերցուեցաւ, այս վանքն ալ ծախուեցաւ, և ելած ստակով Միաբանութեան պարտքերն վճարուեցան. անկէ վերջը ձեռքէ ձեռք անցաւ, բայց միշտ անունը Բէր-Լաշէզ մնաց : 1804^{ին} Սէնի այսինքն Բարիզու գաւառին կառավարին Ֆրոյոյ 160,000 ֆրանգի զնեց քաղաքիս ծախելովը, և Նաբոլէոն Ա^ն հրամանաւն գերեզմանատուն մը հաստատեց : Պրոնեար ճարտարապետին յանձնուեցաւ որ կարգի դնէ, և շուտով մը շէնքը, այսինքն շրջակայ պատը և մէջի ճամբաներն կարգաւորելով՝ նոյն տարուան Մայիսի 24^{ին} Մոլիէրի, Լաֆոնդէնի, Պոմարշէի ոսկորներն փոխադրե-